

չորս դար վերջը արդէն փարաւոնքնիւթ կ'ըլլան թշուառագոյն և սուտ շողորոր-
թութեանց: Այսպէս կը կոչեն զիւսմ-
սէս Զորորդը՝ « Ոսկեղէն լեռ մը. ինքն
իրբն աստուած՝ լուսեղէն պարունակաւ
զաշխարհ կը լուսաւորէ... արքայական
արժանապատուութիւնը կրկնապատ-
կեց... իւր անուամբ Նիլոս աստուա-
ծըն բերանը կը բանայ. իւր կենաց տե-
ւողութիւնն արեգական տեղութեան

չափ է... ինքն է այն՝ որոյ կ'ընծայէ
ժողովուրդն ամէն բան՝ որ ինչ կայ, և
այլն »:

Նախընթաց մասին մէջ փարաւոնի
անձն շատ յիշատակուեցաւ. ինչպէս
բախ՝ փարաւոնի պատմութիւնն՝ Եդիպ-
տոսի պատմութիւնն է: Հետեւեալ հա-
տուածովք՝ ակնարկ մը միայն պիտի ձը-
գենք անոր վրայ:

ԱՐԱԲԱԿԱՆ՝ ԲԱՂԱԲԱԿԱՆ ՈՒԹԻՒՆ

Արաբաց քաղաքականութիւնն Մահ-
մետէն կը սկսի. իրմէ առաջ այս ազգիս
քաղաքականութիւնն շատ ետ մնացեր
էր. Մահմէտ զայն կարգի դրաւ, որով Ա-
րաբք այնչափ զօրացան՝ որ իր յաջորդ-
ներն և աշակերտներն՝ արշաւեցին բո-
լոր աշխարհք գրաւելու: Գանի մը դա-
բու մէջ՝ զՄսորիս, զՄիջագետս և զԵ-
դիպտոս նուաճեցին, և Պարսից Սասա-
նեանց թագաւորութիւնը կործանե-
ցին: Մարգարէին մահուանէն դար մը
վերջը՝ մահմէտականութիւնն իր բա-
զուկները տարածեց յԱրևելք և յԱրև-
մուտս, ընդգրկելով զԱփրիկէ՝ մինչև
յՈվկիանոս, զԱլպանիս և զԳաղղիա
մինչև ի Սէվէն, զՄսորին և զՄիջին Ա-
սիա մինչև ի Հնդկիս: Սակայն քաղա-
քական կռիւներու պատճառաւ՝ խոր-
տակեցաւ այսպիսի ահաւոր միապետու-
թիւն մը. բայց իւրաքանչիւր մասունքն
ալ կենդանացան, և ամենքն ալ զօրա-
ւոր իշխանութիւններ եղան: Պաղտա-
տի ամիրաներն կարգաւորեալ կառա-
վարութիւն, կանոնաւոր վարչութիւն և
200 միլիոնի չափ հաստատուեալ եկա-
մատ ունէին: Արդի կառավարութեանց
նման՝ յօգուտ հասարակաց՝ աշխատու-
թեանց կը ձեռնարկեն, իրենց արքու-
նեաց շքեղութեամբ կը շլացնեն զԱ-
րևելք, և յունկնդրութիւն կ'ընդունին
ոսկիապատ դահլիճներու մէջ՝ Մեծին
Կարողոսի, Կոստանդնուպոլսի, Թաթա-
բաց, Հնդկաց և Զինաց նուիրակները:

Մահմէտական աշխարհին միւս կող-
մը, Գորտովայի խալիֆաներն՝ հարուստ
և արգասաւոր Ալպանիոյ վրայ կը թա-
գաւորէին, և միշտ 300 միլիոնի չափ
եկամուտ ունէին. իրենց կառավարած
երկիրն՝ երկրագործութեամբ, վաճա-
ռականութեամբ, գեղարդեստիք, զի-
տութեամբ՝ Եւրոպայի մէջ ամենէն աւե-
լի նշանաւորներէն է: Իշխանութեան և
քաղաքականութեան կեդրոնն շատ ան-
գամ յԱփրիկէ կը փոխուի, բայց ամէն
քաղաքներէն աւելի նշանաւոր է՝ Նոր Ե-
դիպտոսի մայրաքաղաքն Գահիրէ, Պա-
թիման իշխանաց յաղթական բնակա-
վայրն, որ կը պայքարի Պաղտատի և
Գորտովայի հետ:

Մահմէտական ամէն վարչութիւնը
գրեթէ մի և նոյն օրէնքներն ունէին,
ծանօթ աշխարհին մէկ ծայրէն սկսեալ
ցմիւս ծայրն՝ նոյն կրօնքն և նոյն լեզուն
ունէին. հեռաւոր արշաւանք, յարաբե-
րութիւնք, փոխանակութիւնք, շատ
դիւրացան: Արաբայիք՝ նաւորդ, ճանա-
պարհորդ, վաճառական և աշխարհա-
գէտ էին: Լիւրիկսդոն և Սղանլիք ճա-
նապարհորդներէն տասը դար յառաջ,
Արաբաց կարաւաններն ամենայն հան-
դըստեամբ մինչև Ափրիկէի խորերը
կը յառաջէին. 1154ին Էտրիսի՝ իւր
տախտակաց վրայ արդէն ծրագրած էր
վերին Նեղոսի լճակները. Գալովպոսի և
Կամայի արշաւանքէն յառաջ իրենք
միայն կը նաւարկէին Եւրոպայէն մինչ-

չէ Ասիոյ ծայրը, և հանրագրային վաճառականութեան մեծ ուղին Ասորիքէն և Եգիպտոսէն կ'անցնէր:

Մահմետական ամէն գաւառներու մէջ ուսման մեծ ջանք կար. ամէն քաղաք իր դպրոցներն ունէր. իսկ մայրաքաղաքներու և այլ զլխաւոր քաղաքացի մէջ համալսարաններ բացուեցան, հանդերձ ամէն ուսումնական պիտոյիք գրատուններով, գիտարաններով, թանգարաններով, գեղատուններով: Միայն Սպանիոյ մէջ 70 հատ հասարակաց դրատուն կար. Հաքէմ Երկրորդի՝ Գորտովայի ամիրային գրատունը՝ 600,000 հատոր գիրք կար:

Մահմետէն առաջ կար արաբական բանաստեղծութիւնն. Ղուրանն եղաւ առաջին արձակ գրութիւն: Այս ժամանակէն սկսեալ լեզուն ձեւացաւ. բայց քիչ վերջը ունէր նաև իր ճարտասանութիւնն և քերականութիւնն. և այս լեզուն դիւարթեք գործւոյ մը նման ամէն տեսակ գիտութեան յարմարեցաւ: Արաբական մատենագրութեան մէջ վիպասանութիւնք, նորալուրք, և պատմութիւնք մեծ մասն կը գրուին. ուշադրութեան արժանի գրութեանք են, Հազար և մի գիշերներն և Հաքիտէյի նկարներն: Այս մատենագրութիւնն ունի նաև ճշմարտախօս պատմիչներ և ծանրախոհ անձինք, իպտֆալտուն՝ յի դարուն մէջ գրեց իւր նախորդանքն և ընդհանուր պատմութիւնը, որ իւր ընդարձակ ծանօթութեանց և գաղափարներէն ստուգութեան համար կրնանք բաղդատել ընդ Մօնղէս, քիէյի. ունի նաև իմաստասէրներ և աստուածաբաններ: Ինչպէս տեսանք՝ Արաբացիք նախ և առաջ Աղբբառն, զրիւյ դպրոցին Յոյն ուսուցիչներէն ուսան: Ամենուն ծանօթ է Արաբաց չափաբերական և աստղաբանական ուսմանց մէջ ըրած յառաջադիմութիւնն: Տարրաբանութեան ուսմունքն՝ իրենք հանրեցին և զարգացուցին, և այս ուսման անուանակոչութիւնն ալ իրենք ստուին: Իսկ բժշկութեան նկատմամբ՝ ի վաղուց հետէ արդի ոճերն կը գոր-

ծածէին, և հիւանդութիւնները հիւանդանոցի մահճաց քով կ'ուսանէին. քիչ ետքը գտան նաև դեղագործութեան արուեստն. և առողջաբանութենէ, բնախօսութենէ և ախտաբանութենէ բազմաբաժնի բժշկական գիտութիւն մը հաստատեցին: Իրենց հռչակաւոր բժշկիւններն Ռազէս Պաղատոյի և Էպու Սինա, որոյ բժշկութեան կանոններն վնդգարու միջոց Եւրոպայի բոլոր համալսարանները կը կառավարէին: Արաբացիք որովհետև մեծ ջանք ունէին գիտեր հնարելու, առին և ուսան ի Չինացայն գիտերը՝ որ անպատու և գրեթէ բոլոր աշխարհի անծանօթ էին. իրենք կատարելագործեցին այս գիտերը և ամէն կողմ տարածեցին: Չոր օրինակ. Չինացիք աղբորակ պատրաստելու կերպը գիտէին, բայց միայն ի հրախաղութեան կը գործածէին, իսկ Արաբացիք յարմարեցին զայն պատերազմական գործեաց, հրահան գործիներ շինելով: Չինացիք՝ մետաքսէ թուղթ կը շինէին՝ բայց այն ժամանակ ոչ Եւրոպայի և ոչ Ասիոյ մէջ մետաքսի գործածութիւն կար. Արաբք առաջին անգամ բամբակէ և լաթի կտորներէ սկսան թուղթ շինել. լաթեղինէ շինուած թղթի ամենէն աւելի հին ձեւագիրներն Արաբական են: Չինացիք հնարեցին ուղեցոյցը, իսկ Արաբացիք զայն նաւորդութեան գործածեցին: Արաբացիք կը գործածէին նաև առողջադիտակ գործին (Astrolabe), որ շատ ճարտարութեամբ շինուած էր, և որոյ գործածութիւնն՝ շատ գիւրին էր:

Արաբացիք ճարտարապետութեան ինչպէս նաև միւս ամէն արուեստից մէջ նախ և առաջ միւս ազգաց հետեւցան. հետզհետէ կը զարգանային այս արուեստին մէջ՝ օրինակելով և գծագրելով իրենց տեսած օրինակները, մանաւանդ Բիւզանդականները: Երկուստ ի սկզբան, սակայն քիչ վերջը կ'ոգնուրեն, կը սրբազարեն, կը վերածննդ, կը հնարեն, կը փոխակերպեն և նորաւրուեստ մի յառաջ կը բերեն, նախագաղափար և անկախ յայլոց: Իրենց

տիրապետած երկիրներուն մատակարարած նիւթին համեմատ կամ աղիւսէ կամ շաղախէ կամ քարէ և կամ մարմարինէ շինութիւններ կ'ընեն. սակայն շինութեան գործածած նիւթն ինչ տեսակ ալ լինի, միշտ իրենց չէնքերն՝ նոյն ճաշակն և նոյն հաստատութիւնն ունին, և ամենուն վրայ ալ նոյն խնամքն և ջանքն կը տեսնուի: Իրենց ամենէն աւելի թեթեւ և առ երեստ զիւրակործան երկցած շէնքերն՝ դարերով հաստահիմն կեցեր են:

Արաբական ճարտարապետութեան պատմութիւնը՝ կրնանք որոշակի այլ և այլ դարերու բաժնել: Նախ քան զՄահմէտ՝ արաբական ոճն՝ միայն քանի մը աւերակաց վրայ կը տեսնուի. թերեւս ապագայ հետազոտութիւնք այս դարս աւելի ծանօթացրնեն, Բիւզանդ—արաբական ոճը, Հէճրէէն վերջը՝ մինչև տասներորդ դարուն շինուածոց վրայ կը տեսնենք, այսինքն՝ Օմարէ մզկէթին յերուսաղէմ, Դամասկոսի և Գորտովա. յի մզկէթաց վրայ: Արաբաց շինուածոց վրայ՝ այսինքն, Ալջախնարհ կա, մարներուն, տերեւաղարդ խոյակներուն և ոսկեայ դարդերուն վրայ, յայտնի կը տեսնուի Բիւզանդական ոճին ազդեցութիւնն: Բայց մահմետական շինուածոց ճարտարապետներն ալ իրենց կողմանէ հաւելթած և կամարը, արաբական զարդերը և առկախեալ կամարը կը հնարեն: Զուտ արաբական ոճն՝ տասներորդ դարուն մէջ հաստատուն է, և զրեթէ իտալական վերանորոգութեան սկիզբը՝ կորուսեր է իր ազդեցութիւնն: Եգիպտոս և Սպանիա զարեւալ են այս ճարտարապետութեան հրաշալի գործերով: Քաղաւնի մզկիթըն՝ յեգիպտոս շինուած է, որ Բարիզու Սէնթ—Շաբէլին կը նմանի. քաթմպէյի մզկիթն՝ որոյ սրածայր գմբէթն զարդարեալ է արաբական ճոխ դրուագներով. Հասանայ բնդարձակ մզկիթն, որ գմբէթն մայր եկեղեցիներէն աւելի մեծ է, և որոյ աշտարակն՝ վանատ,

մի սեան կրկին բարձրութիւնն ունի, այսինքն՝ գեսնի երեսէն 86 մէր բարձր: Սպանիա ալ ունի ճիւղալտայի դեղեցիկ աշտարակն, որ անհետացած մըր կրթի մը մասն էր, Սեւիլիայի Ալքազարը՝ իր քանդակեալ հրաշալի ձեղունով. կայ դարձեալ ի Սպանիա Ալհամպարը՝ Կալսիլի պալատն, որ շատ անգամ նկարագրուեր է, սակայն կը դերազանցէ գեղեցկութեամբ քան զամեն նկարագրութիւն:

Այս արաբական ճարտարապետութեան յատկութիւնն՝ երկրաչափական կանոնաւորութեան զարտուղութիւն և ատելութիւնն է. կը խորշի ուղիղ գմբէթէ, ամենաճիշդ անկիւններէ, և միացեալ մակերևոյթներէ: Արաբացի ճարտարապետը՝ միակերպութիւն բնաւ չէին ախորժեր, այլ եռանդուն երևակայութիւն ունէին. սակայն ազնուութեան և դեղեցկութեան զգացմունքն և ճաշակն ալ ունէին: Օրինակի համար. առին Բիւզանդական ամենաբոլոր, միակերպ, հաստ և տեղ կամարը, կամարին գագաթը խորտակեցին, և երկայնեցին զայն հաւերթած, իսկ կամարին յատակը կամ խարիսխը՝ սեղմեցին փոքրացուցին և ձիւ պայտի ձեւ տուին կամարին. որով սիրուն, ներդաշնակ և վսեմ աղեղնաձէ մը հնարեցին: Հռովմէական գմբէթն՝ բոլորաձէ ծանր խոյրի կը նմանէր, փոխեցին զայն Արաբացիք՝ յատակը լայն և գագաթը նեղ գմբէթի Մզկիթներուն վրայէն՝ երկնից կապուտակին մէջ կը բարձրանան թեթեւալէն աշտարակներ. մզկէթաց մէջ չկայ մակերևոյթ՝ որ բոլորովին մերկ մնացած լինի, այլ բովանդակ որմունք ծեփուած են արաբական զարդերով, և Ղուրանին մէջ պարունակուած առածներով և պատուիրաններով: Իսկ որմոց վարի կողմն և յատակն՝ մոզայիզով և յախճապակեալ զարդարուած են. իսկ ներքին և արտաքին կողմերը ներկած են դուռնոց ճարտար թաղադրութեամբ: